

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների բաժնի աշխատանքների կազմակերպման առաջին նախապայմանը ոլորտի տեղեկատվական շտեմարանի թարմացումն է, որն իրականացվում է յուրաքանչյուր տարվա սկզբին: Ուսումնասիրության և համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ համատեղ աշխատանքի արդյունքում 2017 թվականի 1-ին կիսամյակում մարզում կատարվել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 15 երեխայի կարիքի գնահատում, նրանց վերաբերյալ տեղեկատվությունը գրանցվել «Նորք» տեղեկատվական կենտրոնում: Ըստ ուսումնասիրության մարզում 2017 թվականի առաջին կիսամյակում հաշվառված է 118 հաշմանդամ երեխա, որից Եղեգնաձորում՝ 75, Վայքում՝ 30, Ջերմուկում՝ 13-ը:

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն Երևանի բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի եզրակացության և մարզպետարանի վկայագրման հիման վրա 2017թ. առաջին կիսամյակում վկայագրվել է 7 և վերավկայագրվել 14 երեխա:

Մարզի տարածքում 2017 թվականի 1-ին կիսամյակում կենտրոնացված հաշվառման է վերցվել տարբեր պատճառներով առանց ծնողական խնամքի մնացած 2 երեխա: Սոցիալապես անապահով 2 երեխա այս կիսամյակում ուղղորդվել է ՀՕՖ-ի երեխայի աջակցության կենտրոն, կենսաբանական ընտանիք է վերադարձել 2-ը, բաժնի աջակցության շնորհիվ գիշերօթիկ հաստատության 2 աշակերտի տրամադրվել է ամառային ճամբարի ուղեգիր:

Ոստիկանության տարածքային բաժինների անչափահասների գործերով զբաղվող ծառայությունների հետ համագործակցության արդյունքում մարզում անչափահասների իրավախախտման դեպքերը կրճատվել են՝ 2017 թվականի ընթացքում 4 անչափահաս գտնվում է պրոֆիլակտիկ քարտային հաշվառման մեջ: Անչափահասի իրավունքների պաշտպանության նպատակով բաժինը մասնակցել է ՀՀ Ոստիկանության պետի 2013թ. նոյեմբերի 7-ի №3837 – Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի մուրացկանության և թափառաշրջիկության, անչափահասների թրաֆիկինգի խնդիրների կանխարգելման և իրազեկման նպատակով հրավիրված հանդիպումներին: Հիշյալ թեմաներով իրականացվել են հանդիպումներ, զրույցներ մարզի ուսումնական հաստատություններում, առողջապահական հիմնարկներում և համայնքներում: Մարզում չկան մուրացիկ և թափառաշրջիկ, շահագործման (թրաֆիկինգի) ենթարկված երեխաներ:

Համայնքեր է ուղարկվել շրջաբերական նամակ՝ բացահայտելու ծննդի պետական գրանցում չունեցող երեխաների վերբերյալ՝ ծննդյան վկայականների ձեռք բերմանն աջակցելու նպատակով: Ստացված տեղեկատվության հիման վրա մարզում նման երեխաներ չկան:

Տնային այցելությունների, համայնքներում գործող խնամակալության և հոգաբարձության մարմինների հետ համատեղ աշխատանքների շնորհիվ մարզի 39 ընտանիքների տրվել է խորհրդատվական, դրամական և նյութական աջակցություն մարզպետարանի, հասարակական կազմակերպությունների, անհատ անձանց կողմից:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը կոորդինացնում է գենդերային հիմնահարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի աշխատանքները՝ կիսամյակում հրավիրել է 2 նիստ:

Բաժինը սերտորեն համագործակցել է երեխաների իրավունքների պաշտպանության և կանանց հիմնախնդիրներով զբաղվող մարզային և միջազգային հասարակական կառույցների («Շուշան», «Երիտասարդ ընտանիքի աջակցության կենտրոն», «Սոցիալ-հոգեբանական հետազոտությունների և վիճակագրության կենտրոն», «ՀՕՄ»-ի Եղեգնաձորի մասնաճյուղ, «Երեխաների պաշտպանության ցանց >>, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն»>>, «ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ»>>, «Սեյվ դը չիլդրեն»>>) հետ, մասնակցել նրանց կազմակերպած հանդիպումներին, աջակցել մարզում իրականացվող ծրագրերի ներդրմանն ու կլոր սեղանների անցկացմանը, օգտագործել նրանց հնարավորությունները՝ 14 սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն տրամադրելու գործում:

ԸԿԵԻՊ բաժինը մասնակցել է Վայոց ձորի մարզի 8 համայնքների վարչական հսկողության աշխատանքներին, ժամանակին և սահմանված կարգով քաղաքացիներից ստացած 10 դիմումներին տվել համապատասխան լուծում:

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի
ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների
պաշտպանության բաժնի պետ՝

Ա. Գրիգորյան